



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.


պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

794




2nd fl  
1903

Դ. ԲԱԴԻՍ

# ԵՅԻՆԵՐ ԺՈՂՈՎՌՈՂ

ՄԻԵՐ ԳՈԴՈԼՖԻ  
ՊԱՆԴԻՏՈՒԹԻՒՆԸ

Անգլիերէնից թարգմանեց  
ԱՅՈՅ ԲԱՅԱՆԴՐԵԱՆ.



ՃՈՒՂԵՑ  
Ցպարան և. Մ. Մահմետ-Ցակոբիանցի

Բ 2003

Տիպ-Լիտոգրաֆիա Ե. Մ. Մուգդսակովայ, և Շոշե.

1903

2011

32.  
17-52 Տ. Դ. ԲԱԳԻԼԻ  
ԱՐ

# ԽԵՑԻՆԵՐ ԺՈՂՈՎՌՈՂ

ՄԻԵՐ ԳՈԴՈՂՖԻ  
ՊԱՆԴԻՏՈՒԹԻՒՆԸ



1001  
4755 R

Անդրեասից թարգմանեց

Ածու ԲԱՅԱՆԴՐԵԱՆ.



Ճ Ո Ւ Ճ Ի

Տպարան և Մ. Մահմետ-Յակոբեանցի

Типо-Литографія Е. М. Мугдусіакопової, въ Шушѣ.

1903

卷之三

167

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ

48.10404 10000

## ପ୍ରମାଣିତ କାନ୍ଦିର ପାଇଁ

Дозволено Цензурою 2 Апрѣля 1903 г. г. Тифлис.

СИДОРЧУК ВІКТОР

Ես Զօֆրուա կոմսի փոքր որդին էի և ունէի երկու տւագ եղբայր: Մենք ապրում էինք Մէուզալի տիկին գտնւող Հին ամրոցում, ոչ հեռու Հուից: Մեր սեղանը միշտ ճոխ էր կոմսի (իմ հօր) և իմ անդրանիկ եղբօր որսած երէի մսով, ձկնով և մեր զառիվայր պարտիզում աճող բուսեղէնով:

Հօրս եկամուտներով հաղիւ վճարում էինք  
մեր ծախքերը, կերակրում էինք մեր ձիուն, տա-  
լիս էինք ծեր Զօդէֆի ոօճիկը, վառօդ և գնդակ  
էինք գնում:

Սւագ եղբայրներս մտան օտար ծառալութեան մէջ և սպանուեցան պատերազմում: Իսկ երբ լրացաւ իմ քսան և չորս տարին, մեռաւ իմ կոմս Հայրը և թողնելով ինձ՝ որպէս ժառանդ իւր կալքերի, ծանրաբեռնեց պարտքերով:

Ես մտադիր չէի նրա պէս նոյն տեղը բնակութիւն հաստատել. որոշեցի իմ բոլոր ինչքը ծախելով փառ գարձնել և ուրիշ տեղ գնալով բախտ ու բոնել: Երբ վճարեցի իմ հօր պարտքերը և իմ ծա-

խած բաներիս փողերը հաւաքեցի, ես համարեցի հարիւր լիսուն ոսկէ լուիզիմ քսակի մէջ, մի պարանով շըջանակի կապեցի, սեղմեցի ծեր Զօղէֆի ձեռքը, և ըոլոր բախտս իմ գրալանում, հօրս աղամանդէ մատանին մատիս, իմ ետևից փակեցի զառիվալը պարտէզի փոքրիկ դարբասը, շըջելով անցաւ փոքրիկ ժայռի անկիւնը, որի վրայ բերդն էր շինուած, և հայրենի տունը կորաւ իմ տեսքից:

Իմ սիրաը լի էր մի թեթև և գեղեցիկ զգացմունքսվ. ես կարծում էի թէ ամբողջ աշխարհն իմ առաջս է. երբէք տասն մղոն մեր տանից հեռու չէի գնացած, ունէի իմ քսակում հարիւր լիսուն կտոր ոսկի. ինձ թւում էր, թէ ամբողջ աշխարհը իւր հարստութիւններով ու քաղցրութիւններով իմ տրամադրութեան տակ է:

Ոչինչ չըլվոդովեց իմ այս զգացումները մի քանի շաբաթուալ ընթացքում, որից յետով, իմ քսակը մի փոքր թեթևացած գտնուում էի Վիեննայում, և աւելի երջանիկ չէի այն ժամանակից, երբ բախտ որոնելու համար ճանապարհ ընկալ:

Վիեննան ոսկով լիքը քսակով, անփորձ պատանու տեղ չէ. պատանու սիրտը բարեխում է զուարձութիւնների համար, որոնցով բեղմնաւոր է կեանքի այս եղանակը:

Կէսօրներից յետով և երեկոները հազիւ էր պատ ժամանակ մնում իմ մտածելու համար. բայց առաւոտները բաւականի մոալլ մտքերը ծանրա-

բեռնում էին ինձ, երբ ես խիստ լուրջ կերպով խորհում էի իմ լոյսերի մասին: Իմ միտքն անընդունակ էր ապագալին վերաբերեալ որ և է հարց տրամաբանօրէն պարզաբանելու:

Մի երեկոյ, երբ ես սովորականից վաղ տուն վերագարձայ, սկսալ ինքս ինձ հարց տալ, թէ արդէն չորս ամսից պակաս չի լինիլ որ ես Վիեննայումն եմ և դեռ ևս ոչ մի քալլ չեմ արել իմ տալագան հալթալթելու համար. ի՞նչ կ'անեմ, երբ իմ քսակը կըդատարկի: Ես անհանդստութեամբ հանեցի քսակս իմ գրամանից և մէջը պարունակած փողը սեղանի վրայ թափեցի. սեղանը ոսկիների փոխարէն պղինձներով ծածկուեցաւ . . .

Սկզբում ես կասկածում էի իմ գգալարանների ստուգութեան մասին. բայց երբ շփեցի աչքերս և շօշափեցի գրամները, այն ժամանակ բոլորովին համոզուեցալ, որ պղինձներ էին, բոլորը պղինձներ:

Վերջին ժամանակները քսակս ինձ մօտ էր լինում: Անցեալ գիշերը, մի օտարականի հետ միասին, „Պլաս Սան Զօղէֆ“ հրապարակի սրճատներից մէկում ես խմեցի մի շիշ Ուէնին գինի: Յիշում եմ, իմ քսակը սեղանի վրայ էի դրել. երբ ես թմրած սեղանի վրայ ընկալ, թոյլ կերպով քսակիս վրայ էի դրել իմ ձեռքը: Երբ ես անտգան զարթնեցի, օտարականը գնացել էր, իսկ իմ ծանը քսակն անշարժ ձեռքիս տակն էր:

Մի փոքր ժամանակ ես մնացի շուարման մէջ. Ես լոյս ունէի, որ անշուշտ լուսով կը տնեմ իմ քսակը: — Բայց փողից զո՞ւրկ լինել Ես վեր թռայ, դուրս պուծալ տանից, սրճատունը գնալու, որտեղ վերջում եղել էի: Առաւօտեան մօտ երրորդ ժամն էր, լուլիսի սկիզբը. սկսել էր լուսանալ: Արագ քայլերով ես գնացի գէպի „Պլաս Սան Զօդէֆ“ հրապարակը և հէնց հրապարակը մտնելիս մի մուշտակով փաթաթուած մարդու իմ մօտից անցնելիս տեսայ: Ես բաւականին որոշեցի և համոզուեցայ, որ դա իմ կասկածած օտարականն էր:

Ես կանգնեցի և խօսեցի: Նա վայրկենապէս տեղը կանգնած մնաց, չորս կողմը շրջեց և ասաց:

— Պատանի, դուք վրդովուած էք երկում:

— Ուրիշ կերպ չէր կարող լինել, — ասացի ես և շտագ պատմեցի, թէ ինչ հանգամանքներում նա պատահեց ինձ:

— Ուրեմն դուք իմ մասին կասկածում էլ էք,

— ասաց նա, մի թափանցող հայեցք սեեռելով ինձ վերալ:

Օտարականի կերպարանքն աւելի ևս մեծացըց իմ կասկածանքը նրա մասին:

— Յարմար ժամանակը հիմա է, մտածեցի ես, և եթէ նրան ձեռքից բաց թողնեմ, եթէ ոչ հաւաստի, գոնէ հաւանական է, որ ընդ միշտ նրան չեմ գտնիլ:

— Ես ձեր մասին եմ կասկածում, ասացի

Ես և աշխատեցի բռնել նրա օձիքից: Կայծակի արագութեամբ նա մի կարճ խէնջար հանեց շորի տակից և կամեցաւ իմ կուրծքը խրել:

Եթէ ձեռքս իսկոյն չըբարձրացնէի՝ հարուածից պաշտպանուելու, մի թեթև վէրք կըստանալի: Ես ուժեղ երիտասարդ էի, համարեա իմ հակառակորդի չափ ուժեղ: Անյուսալի մարտից յետով, երբ զգացի որ կեանքի համար եմ մենամարտում, խլեցի զէնքն իմ հակառակորդից, և մենք երկուսս էլ նոյն վարկենին վայր ընկանք: Ես մինչև դաստակը խէնջարը նրա կուրծքը խրեցի:

— Բարեկամ, — ասաց նա թոյլ կերպով, — ձեր կասկածներն ուղիղ էին. ձեր փողը ես եմ վերցրել, ես ձեղ էլ կըսպանէի, եթէ կարողանալի. բայց այդինձ չէր վիճակուած: Ձեր սեփականութիւնը դուք կըդտնէք իմ քսակում, որ կապած է գոտիիցս, չուխալիս տակ, նրա մէջ ձերից աւելի փող կալ, բայց . . . : Նա տիլ ևս չըկարողացաւ խօսել, ցնցողական դողը բռնեց նրան, և կեանքը մարեցաւ: Մարտի ժամանակ չուխան պատառուուել էր, այնպէս որ քսակը պարզ տեսնում էի. Ես իսկոյն կտրեցի և վերցրի այն:

Հաղիւ էի գրաւել քսակը և կանգնած էի մեռելի գիտիկ մօտ, երբ, իմ վտանգաւոր գրութիւնն զդալով, ուկիների հետ երկիւղը պաշարեց ինձ:

Ոչ ոք Վիեննակումն ինձ չէր ճանաչում, այս-

տեղ ընկած էր մի սպանուած մարդ. փոքր ինչ հեռու ձգած էր նրա արիւնոտ խէնջարը, որ ինքն էր հանել իւր կրծքից. իսկ ես, ոսկիների քսակը ձեռիս, կանգնած էի դոցա մօտ: Ես ընկել էի անելանելի դրութեան մէջ. արդէն այնքան լուսացել էր, որ եթէ մի լուսէ մնալի — բոլոր եղածը լայտնուելու էր. եթէ փախչէի — ինձ եղեռնագործ կը համարէին: Երկու դէպումն էլ, զգում էի, որ մեղքն ինձ վրայ էր ընկնելու, և ես պիտի տուժէի:

Այս տատանման ժամանակ այլ կերպ չէի կարող վտրուել, բայց միայն փախչել անխուսափելի վտանգից. և արդէն վճռել էի ոսկիների քսակը դիակի կողքը դցել և շտապով հեռանալ, երբ տեսայ, սրճատան դուռը, դէպի որը գնացել էի, բաց. դուրս եկաւ տէրը և քալեց դէպի ինձ:

Ես սպասեցի նրան, ու երբ նա մօտեցաւ, ոկրսեցի արագ կերպով պատմել իմ արկածը:

Իմ վերջացնելուց առաջ, ինձ ընդհատելով, նա ասաց:

— Սա կարճ ժամանակում լաւ էք կազմել. սակայն ամբողջ գործին ես ականատես եմ եղել: Մեռնողը մի պատուելի պարոն էր և չէր կարող խարել: Յանձին նորա ես կորցրի իմ լաւ այցելուներից մէկին: Ես տեսալ, թէ դուք ինչպէս պատհէցինք նրան. ինչպէս աշխատեցիք բոնել նրա

օձիքից և կրուեցիք նրա հետ. ես այժմ տեսնում եմ նրան սպանուած, և քսակը ձեռքիդ, դուք կանգնած էք նրա մօտ: Ես ճանաչում եմ՝ այդ քսակը նրանն է, կարծում էք թէ որևէ մէկը կը հաւատալի ձեր պատմութեանը. հաւանական է, որ ձեզ կամ թիավարութեան պատժի, կամ հայեցարան կ'ուղարկեն:

Ես զգացի, որ նու ճիշդ է ասում, և որ նրա պատմութիւնն ու հանգամանքներն ի նկատի առնելով պիտի դատապարտեն ինձ:

Նա ասաց.

— Բայց այս ոճրագործութիւնը բացի ինձանից ոչ ոք չի տեսել. եթէ իմ խօսքով կարող են ձեզ կախաղան բարձրացնել, ես նոյնպէս կարող եմ կախաղանից բոլորովին ազատել ձեզ. բաժանիր փողն ինձ հետ. ես կ'երգուեմ՝ որ նա յարձակուեց և կամեցաւ կողոպտել ձեզ, ու կազատեմ ձեզ:

Ես զգացի մի անսովորական և սարսափելի որոշում, որին և հնազանդուեցալ: Ինձ կարող էին դատապարտել այս մարդու ականատեսութեամբ: Ես պէտք է կամ փախչէի տանջանքների ենթարկուելուց, կամ որպէս ոճրագործ լայտնէի, որ ես եմ կողոպտել ու սպանել, և փողը բաժանել այն ստոր մարդու հետ, նրա լուռութիւնը գրաւելու համար: Սակայն կոփւը բոպէական էր: Ես չէի ցանկանում մի մարդու առաջ ստոր լինել. թէպէտ

և բացի նրանից ոչ մէկն էլ չըկասկածէր իմ մասին:

— Ոչ, ասացի ես, —դուք լաւ չէք անում. ես աւելի հեշտութեամբ կըկորցնեմ իմ սեփականութիւնը, քան թէ յանձն կառնեմ այդ տեսակ անարգանք, այդպիսի ստորութիւն:

Ես վայր գցեցի քսակը ու հեռացայ, թողնելով իմ մեղագրողին ճիշդ նոյն կրիտիքական դրութեան մէջ, որի մէջ էի գտնւում ես, նրա ինձ մօտ դալուց առաջ:

## II

Հետեւալ մտածմունքը ժամանակին չըծագեց իմ գլխում: Ես չէի հասկանում, որ այդպէս վարուելով իմ սեփական պատուի զգացումների վերաբերմամբ, թողնում էի մէկ ուրիշին վերին աստիճանի ճակատագրական վիճակի մէջ, որից ես սարսափում էի:

Նատ տարիներ յետոյ, երբ ես միանդամ տնցնում էի Վիեննայով, ցանկացայ առաջուայ գլուխս եկած զգալութիւնները նորոգել:

(Հէնց նոյն ժամանակն էր, երբ մի օտարութիւնները նորոգելիս):

Մի երեկոյ ես ծպտուած գնացի „Պլաս Սան Զօդէֆի“ սրճատունը, և Թրիգրիս Հեօրդէրի, նախկին տիրոջ ուր լինելու մասին իմ հետախուզութիւն-

ներից իմացայ, որ տասներկու տարի առաջ քննել և գլխատել են՝ մի սկարոնի անգութ սպանութեան համար, որ սովորութիւն է ունեցել իւր տունը յաճախելու և որին նա սպանել է ինչքը գրաւելու համար: Այս լուրն իմանալով, սկզբում ես շատ վրդովուեցալ. մարդն անիրաւացի էր տանջուել: Բայց երբ ես մտածեցի նրա ընաւորութեան մասին, աւելի ես, երբ խելամուտ եղայ որ այս մարդու վիճակը իմը ալիսի լինէր, չէի կարող խղճալ Հեօրդէրի իմ տեղը պատժուած լինելու համար, որ ամեն բանի մէջ ինձանից աւելի մեղաւոր էր:

Վերագառնալուց ես շտապեցի և, առանց որևէ բան վերցնելու, գնացի, հեռանալու այն տեսարանից, որտեղ ես աննպատակ, երեւելի գերասան էի եղել:

Մի օտարութիւններաշնակութիւն կար իմ զգացումների և ինձ շրջապատող առարկաների մէջ: Արեգակը ծագել էր և իւր առաւծուեան ճառագայթներով սակեզօծում էր աշտարակների գագաթները և պալատի մահարձանները, որոնք բարձրանում էին առաւօտեան խաղաղ օդի մէջ: Ամեն բան լուռ էր. գեռ ևս քաղաքը խրուած էր խոր քնի մէջ: Միայն իմ հոգին, թէպէտ և, փառք Աստուծոյ, բոլորովին անմեղ, ահոելի կերպով լուզուած էր տարակուսանքից և վասնզից:

Արագ քալելուց յետոյ ես մօտեցայ քաղաքի

գռներից մէկին, որ գեռ բաց չէր: Ես վրդովուած ամենաանհանգիստ զգացմունքներով նրա մօտ ժամալվաճառ եղալ, մինչև որ թոյլ տալին անցնելու: Բարեթախտաբար, մի քանի ըոպէից յետոյ, հինգին, հնչեց մալր եկեղեցու ժամը: Սա դարբասները բանալու նշանն էր: Ես դուրս անցալ, և ոչ ոք ինձ հարցուի փորձ չարաւ: Ես քալեցի որքան արագ կարող էի, առանց մտածելու, թէ դրանով կարող էի կասկածներ ծագեցնել անցալ քաղաքի և արուարձանի մէջ եղած տարածութիւնը, և շուտով գտնւում էի գետափին, մի ամբարտակի մօտ, որի վրայ մի պարան կապելու համար երկու մարդ էին աշխատել: Նա տմրացրած էր ափի մօտի նաւին:

Նաւի վերնայարկի աղմուկից և ճանապարհորդների շատերի արտաքինից երևում էր, որ նա շետը ընկնելու վրայ է: Ես քալեցի նաւի վրայ, և մի ըսպէ յետոյ մենք գետի մէջ տեղումն էինք, իսկ քաղաքն արագ կերպով թողնում էինք մեր ետևում:

Իմ նաւի մէջ մտնելուց չէր անցել մի քանի ըոպէ, երբ նաւապետը եկաւ՝ նաւի վարձը ստանալու, ու հարցըց, թէ որչափ տարածութիւն ես մտադիր էի գնալու: Որքան ես անկարող էի նրա խնդրին համաձայնելու, նոյնքան անպատճաստ էի նրա հարցին պատասխանելու: Ես մօտս

կոպէկ էլ չունէի: Ես չասացի թէ որտեղից եմ գալիս և չըզիտէի թէ նաւը ուր է գնում: Ռոպէական լուութիւնից յետոյ ես ասացի, որ պատրաստ փող չունեմ: Բայց գնելով նրա ձեռքը ոսկէ ժամացուցը որ ես գնել էի Վիեննա գալուց յետոյ, ասացի, որ նրանից կարող է վերցնել, որքան ցանկանում է: Բայց իմ արտաքինից և հանգերձանքից նկատելով, որ ես նշանաւոր անձնաւորութիւն պիտի լինեմ, նա մերժեց իմ գրաւականը, նկատելով, որ թրեսթուրգում, Թասրում, Բուղալում, որտեղ որ ցանկանամ, կամ նոյն տեղում, որտեղ ես կըթողնէի նաւը՝ կարող եմ վճարել նաւի վարձը:

Կարճ ժամանակում մեր ետև թողեցինք մայրաքաղաքի բոլոր հետքերը: Խաղաղ և արագ անցանք վերոյիշեալ արեան և վտանգի տեսարանից:

Բնութեան պարզութիւնը անհանգիստ զգացումների վրայ մի զարմանալի ազդեցութիւն ունի: Եթէ խղճի խալթը չի խառնւում նոցա հետ, արտաքին աշխարհի գեղեցկութիւնը և խաղաղութիւնը խաբում է մեղ մեր գժեախտութեան մէջ և համարեահաշտեցնում է մեր վիճակի հետ, որքան մութ էլ լինէր նա: Երեք ժամ չի լինիլ, որ ես կանգնած էի մեռած օտարականի կողքին, կախաղանից փախչելու ոչ մի յոյ չունենալով: Իսկ այժմ չըզիտեմ թէ ուր եմ գնում: առանց փողի, առանց որեւէիրի, առանց ընկերի: Բայց ես երիտասարդ էի, տռսղ էի, և ամբողջ բնութիւնն ինձ երևում էր

այնքան զուարթալից, որ զգում էի թէ իմ ոսկիներով լիքը քսակով մի զբօսանք էի կատարում:

Իմ շըշապատողների խօսակցութիւնից շուտով իմացալ, որ նաւը մինչև Բէլգրադ ալիսի գնար: Ես ասացի, որ ես էլ հէնց այնտեղ եմ գնում:

Ես չեմ ուզում ճանապարհորդութեան մանրամասութիւնները նկարագրել. միայն այսքանը բաւական է ասել, որ հինգերորդ օրը, կէսօրից յետոյ, մենք տեսանք Բուդան, բլուրը և ամրոցը լուսաւորուած մայր մտնող արեգակից, որ ամբողջ քաղաքը թողել էր երեկոյեան շուաքնների մէջ: Այստեղ ես որոշեցի ծախել իմ ագամանդէ մատանին: Ես նաւապետին ասացի՝ որ պէտք է ափն իջնեմ, և քանի որ մեծապէս պարտաւոր էի նրան, պնդեցի վերցնել ժամացոյցը. հետևաբար, մատանին իմ միակ աղբեւըն էր: Ես չէի կամենում հրաժարուել նրանից, բայց տարակուսանքի տեղը չէր:

### III

Իւրաքանչիւրը, որ եղել է Բուդայում, կրկիշէ այն երկար, նեղ փողոցը, որ տանում է գետից դէպի քաղաքի սիրտը: Ես շատ հեռու չէի գնացել այս փողոցով, երբ մի պատուհանից մէկին ոսկերչական աշխատանքով զբաղուած տեսալ. ինձ այնպէս վիճակուեցաւ, որ իմ չար ոգին առաջնոր-

դեց ինձ ամբողջ Հունգարիալի լկտի անբարոյականի խանութը: Նա ահազին հարստութիւն էր գիզել իւր չար օրէնքներով ու պղծութիւններով, և հարստութեան շնորհիւ մեծ ազդիցութիւն էր ձեռք բերել իւր այլրած քաղաքում: Ես իմ մատանին հանելով նրա ձեռքը դրի, խնդրելով գինը: Նա նայեց առաջ մատանուն, յետոյ ինձ. այս բանը փոփոխակի կրկնուեց մի քանի ըռպէներ:

Նա իմ արտաքինից տեսաւ և իմ բարբառից իմացաւ, որ ես իւր քաղաքից չէի, և հաւանականօրէն, հասկացաւ, որ ես եկել էի նոյն ժամին, որպէս այդ օրերում սովոր էին կանգնել Բուդայում: Երկար ուշադրութեամբ դիտելուց յետոյ, նա մատանին բռնած գործիքով մատանին կորեց և դցեց մի ուրիշ ոսկեղնով լիքը տուփի մէջ:

— Ի՞նչ արիք այդ,—գոչեցի ես և աշխատեցի բռնել նրան. բայց նա դուրս ալրծնելով իմ ձեռքից, դուրս եկաւ խանութից: Նա գուռը կողպեց իւր ետեկից մի պտուտակաւոր կողպէքով: Ես իսկոյն լսեցի, թէ նա ինչպէս մի քանի անգամ կանչեց.

— Գո՛ղերը, գո՛ղերը...

Մի քանի ըռպէից յետոյ նա նորից ներս մտաւ, իւր հետ վեց հոգի բերելով: Նոքա շղթաներով կապեցին ինձ, և առանց մի խօսք լսելու բանդը տարան:

Միւս օրը, վաղ առաւօտեան, ինձ տարան դա-

տաստանի դահլիճը; ուր ներկայացաւ ոսկերիչը՝ որպէս իմ մեղագրող: Նա ասաց:

— Այս մարդը երէկ երեկոյեան իմ խանութը եկաւ, որտեղ ես սովորաբար բանում եմ: Բոլոր վաճառականներից յետոյ կողաքեց գուռը, և պահանջելով ինձնից գնելու իւր չնշին լուլունքը, փորձեց խլել ինձանից մի աղամանդէ մատանի, որ ունելիքով բռնած, խոչորացուցով նայում էի, ու կոտրեց կոռուի ժամանակ: Այն մատանին, որ նա խնդրում էր ինձ գնել, այստեղ է. և այդտեղ է այն մատանու կտորները, որ նա փորձեց առնել ինձանից: Նրա սեփական մատանին տասն դուկատից առել չարժէ, այն ինչ, իմն արժէ ամենապակասը երկուհարիւր դուկատ:

Ես իգուր էի բողոքում իմ անմեղութեան համար. իգուր յախանեցի իմ մեղագրողի լիտիութիւնը. իգուր ասացի իմ պատմութիւնը. իգուր խնդրեցի մանրամասնութեան հաստատման համար ինձ ալտեղ բերող նաւի նաւապետի ետեից ուզարկել:

Իմ մեղագրողն ասաց.

— Նաւապետին կանչելն անկարելի է, որովհետեւ վեց ժամ կըլինի, որ նաւը ճանապարհ է ընկել. բացի դրանից, (աւելացրեց նա) ինչպէս կտրող է այն մարդը, որ գրապանումը մի կոսէկ չունի, այսքան ժանգաղին գոհարեղէն ունենալ: Կարճ ասած, այս դատողութիւնը գերադասուեց

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ  
ՄԱԿԱՐԱԳՐԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ ԱՐՄԱՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ  
7/17 1922  
Կ արդէն մագիստրական գուռը որ ինձ պիտի կախաղանի դատապարտին, երբ մի միտք եկաւ գլուխս:

— Սպասեցէք, — ասացի ես դատաւորին — ես զեռ ևս մի բան ունիմ ասելու, որ կ'ապացուցանէ իմ մեղագրողի խաբեբայութիւնը և իմ վիրաւորուած լինելը: Զեր սեփական ձեռքումն է մատանու կտորները, որ նա ասում է թէ իրենն է: Հարցըք իմ մեղագրողից, թէ քանի աղամանդից է կազմուած իւր մատանին: Եթէ ճիշդ է, որ մատանին իրենն է, նա չի կարող չիմանալ այդ. քանի որ, ինչպէս դուք լսեցիք, ինքը զին դրաւ մատանուն:

Իմ մեղագրողը տարակուսանքի մէջ ընկաւ: Բայց, վերջապէս համարձակուեցաւ ասել, որ մատանու գինը կախուած է կենտրոնի մեծ աղամանդից, իսկ միւսները նա փոքր գնով է առել: Ես ասացի.

— Մի բոլի առաջ նա ասում էր, որ լաւ ճանաչում է իւր սեփական մատանին. այն ինչ ես իրենից աւելի լաւ եմ ճանաչում: Մատանին կազմուած է ինն աղամանդից և ամենաթանգ գոհարի տեղը ճեղք է: Այժմ, շարունակեցի ես, հարցըք իմ մեղագրողից. կայ որ և է գրութիւն իւր մարանու մէջ: Այս հարցի վրայ իմ մեղագրողն սսաց, թէ կալ, բայց որովհետեւ գրութիւնը չի կարող իոխել գինը, դըա համար էլ ինքը ջանք չի գործ

դրել կարդալու:

— Ուրեմն, եթէ իմ մեղադրողն իրաւացի է, և մատանին իրենն է, ես կարող եմ ասել. մի ըռակ անգամ, մեր կոռուից առաջ, խոշորացոյցով նա չի նալել մատանու վերալ. խոշոր տառերով մէջը գրուած է „Գօդոլֆ“ բառը:

Իմ մեղադրողի պարառութիւնը այժմ այնքան կատարեալ էր, որ իւր բոլոր հարստութիւնն ու ազգեցութիւնը բաւական չէին կշեռ բոլորովին դարձնելու. թէպէտ և նոքա արգելեցին յայտնի յանցանքի համար նրան գլխատելը:

— Ես վճռում եմ, որ այս օտարականին մեղադրողը վճարէ նրա մատանու վրայ դրած գնի կրկնապատիկը:

Դուռը թողնելուց առաջ իմ գրպանը դրի չորս հարիւր դուկատ: (Սիեօր Գօդոլֆի օրագրից այստեղ տասն և եօթ թուղթ բաց է թողւած: Սոքա պէտք է պարունակէին նրա տարամկրութեան պատմութիւնը, մեր վերևը տեսած արկածը վերջացնելուց յետոյ, մինչև Սիեօրի միւս օրուայ Հնդկաստան նաւելը:)

## IV

— Այսուհետեւ մայիս առաջ առև ընթառ չէն կարմայ? ոքուշեած պահպատ գանձ բաղդի ճամփ ցիւն բժիշկ նկատ բաշտուալու բացի հեղարա միլ միու զի և առաջ սիմուն ու զի լուս այսունդի ապարան մաց իշխանութիւն առ փոյ մազդու սինքը Կհարկէ, ես պէտք է այս նաւահանգստում մի նաւ գտնէի, որ ինձ Հնդկաստան տանէր, այնտեղ առուտուր անելու: Ես զբօսնելով մինչև ափը հասայ, որ շատ երկար էր և կիսալուսնի ձև ունէր: Սյատեղ ես սպասեցի, մինչև մի Հնդկաստան գնացող նաւ գտնեմ: Մի շաբթից պակաս ժամանակում իմ հետախուզութիւնները յաջողութիւն ունեցան, և Մարսէլլի նաւահանգիստը մնաց մեր ետևը:

Յաջողակքամբիները շարունակեցին նպաստել մեզ Միշերկրական ծովի վրայ և Ստլանդեան ովկիանոսի հարաւում, ու մենք առանց փորձանքի անցանք աՓրիկական Բարելուսոյ հրուանդանը: Մեր նաւը պիտի գնար Սուրաթ, որ Հնդկաստանի ամենաթանգագին իրեղնների առեւտրական կենտրօնն է, և որի դէալի Պարսից ծոցն ամենակարճ ճանապարհն անցնում է Մադագասկար կղզու և Ս.Փրիկալի մէջ եղած Մոզամբիկ ջրանցքով: Թեթև հողմերն ուղեկցեցին մեզ, մինչև մենք հասանք Սօֆալալի ծոցը, որտեղ ցանկացանք մի փոքր առուտուր անել աՓրիկական եղբի ընիկների հետ, և օգօստոսի 11-ին,

Հրանցքի մէջ, ափից մօտ երկու մղոն հեռաւորութեան վերալ մենք խարիսխ ձգեցինք:

Սըևադարձի վրայ պատահող կարճ օրերից մէկը վերջանալու վրայ էր: Սըեգակն իջնում էր հորիզոնից ներքեւ, իսկ ես, դիտելով նրան հանդարտ ընկղմելիս, թէք էի ընկել նաւի առաստաղի վրայ: Յանկարծ ես լսեցի ներքելից «Հրդեհ»,» աղաղակը և տեսալ սարսափահար գէմքերով մի խումբ նաւաստիներ, որոնք մագլցեցին նաւի ներքին գոնից, արագ ընթացան գէպի նաւի լետին մասը՝ նաւակն իջնելու: Ես ցատկեցի, և որքան ոտներում ուժ կար, ընազդմամբ հետևեցի նոցա: Բայց տեսալ նոցա արդէն սաստիկ հեռացած գէպի խախուտ նաւակը, որ համարեա լցուել էր նրանցով: Տեղափոխուել այն նաւակի մէջ, որ թէպէտ ոչ այնքան վտանգաւոր, բայց փոքր ի շատէ ապահով էլ չէր, նշանակում էր մի մահ փոխել միւսի հետ: Յատակից բարձրացող բոցերն ամեն կողմից աճում էին, այնպէս որ մի բոպէ ուշանալը ճակատագրական էր: Որովհետեւ ծովահէներն անհանգստացնում էին, նաւի մէջ կար վառօդի մի մեծ քանակութիւն. կար նոյնպէս մի լողացող նաւակ, որ պարանով կտափած էր նաւից: Նա այնքան փոքր էր, որ ակումբը ուշադրութեան արժանի չէր համարում նրան: Մի բոպէում ես վճռեցի իմ բախտը. ցատկեցի ծովը, վերելալ նաւակը, կտրեցի պարանը, և մենակ ընկալ

ընդարձակ ովկիանոսի մէջ:

Սարսափելի տեսարանը հիմա էր:

Սըեգակը մայր էր մտել, և արևադարձների մէջ երեկնօրեալ լոյսի քիչ լինելու պատճուռով, այրուող նաւի հրդեհից ազատուելով, ես շուտով խաւարի մէջ էի: Փալող կարմիր լուսով ես շատերին տեսայ կախուած նրա կողերից, որոնք հալուած կուպրի ուժից նրա լատակը թողնելու վրայ էին: Ես տեսալ, թէ ինչպէս նորա մի առ մի վայր ընկան ովկիանոսի մէջ: Ես տեսալ—մի մեծ բազմութիւն լցուեց իմ թողած նաւակը: Ես տեսալ նոյնպէս, թէ նա ինչպէս վայրկենապէս խորասուզուեցաւ, և կենդանի ալրուողներին ջրերին լանձնեց: Նոյն ժամին, նաւից, խառն բոցերի ճայթիւնների հետ, ես լսեցի սարսափի և յուսահատութեան վայրենի աղաղակներ: Ես լուռ սպասում էի բոմբիւնին, որ պէտք է ինձ մենակ թողնէր գիշերն ովկիանոսի մէջ. նա վերջապէս լսուեցաւ: Լոյսը շառաչում էր. մթագոյն, յամբաշարժ կուպրը կոհակի պէս գնում էր ջրի և օդի միջև: Լոյսի զանգուածների մեծութիւնը, խառն սե մարմինենըով գէպի երկենք էին թռչում, և նորից ծովն ընկնելով, սուլացող աղմուկով անյայտանում էին, միշև ամեն կայծ մարեցաւ, մինչև ամեն բան լոեց ջրակուտիներքեւում: Թանձը խաւարը և գերեզմանական լուռթիւնը տիրեց քաղցած խորքի կրծքի վերալ:

Այստեղ իմ լիշողութեան թելը կտրում է. իմ մենակութիւնը մի փոքր ժամանակ քունը մոռացնել տուաւ: Ես միայն լիշում եմ, որ բարձր երկիրը, որի մօտ նտւը խարիսխ է ձգել, ես ճիշդ կարողանում էի որոշել հարաւալին երկնակամարի աստղերի նոսր լուսով: Նա հետզհետէ չքացաւ:

Ես գործիք չունէի, որ նպաստէր իմ ընթացքին: Ես պառկեցի փոքրիկ նաւի հիմքի վրայ, յանձնեցի ինձ նրան, որ ազատեց ինձ սարսափելի մահից և Որը կարող էր պահպանել ինձ, ու քունը իմ աչքերին եկաւ:

V.

Ես զարթնեցի յանկարծակի ցնցումով. որը լուսացել էր: Ես վերկացալ և նալեցի շուրջաւ: Ես մօտ էի գետարերանից ու կարճ տարածութեան վերայ տփից: Աֆրիկայի գետերը բերում են հեղեղալին տիզմ, որ երկու կողմին էլ կազմում է աւազալին ափեր: Հոսանքը քշել էր իմ փոքրիկ նաւը դոցանից մէկի վերայ: Ես շնորհակալ եղայ Աստուծուց իմ ազատութեան համար և քիչ դժուարութեամբ ափը ելայ: Ես նստեցի գետափից մի փոքր հեռաւորութեամբ, աւազէ չոր ըլլակի վերայ ու սուր կերպով իմ շուրջը նայեցի: Իմ առաջ էր ալեծուփի ծովը և փայլում էր հայելու

պէս իսկ. ներքեռում, փոքրիկ, անզօր ալիքները ցատկումներով վազում էին համարեա հորթ աւազի վրայով:

Իմ աչքերն արագ կերպով հրապուրում էին գեղեցիկ և բազմատեսակ գոյներով, որ պսպում էին աւազէ ափի վերայ, արեւագարձալին արեգակի ուղղահայեաց ճառագալիթների տակ: Ես գտայ, որ այս արտաքին երկութն առաջ էր գալիս անթիւ ծովալին արտադրութիւններից, որոնց վրայ վերոլիշեալ ալիքը փայլիւն էր թողնում, և որոնք թէ գեղեցկութեամբ և թէ բազմատեսակութեամբ գերակշռում էին այն բոլոր կարծիքները, որ ես կազմեցի առաջ, ծովի ծածկած հրաշալիքների մասին: Հենց նոյն բոպէին իմ ապագայ կեանքի ուղղութիւնը որոշուեցաւ: Այս բոպէն գունաւորեց իմ ապագայ տարիների երջանկութիւնը: Ես Վիեննայում տեսել էի, թէ որքան թանգ գնահատուեցաւ խեցիների և ծովալին արտադրութիւնների մի ժողովածու. բայց այստեղ մի ժամի աշխատանքը բաւական չէր նոցտ հաւաքելու համար: Անկարելի է երեակայել, թէ կըլինէր մի վիճակ, աւելի ծայրահեղ առանձնացած, քան այն, որի մէջ էի գտնւում ես նոյն բոպէին: Բայց երբ նալում էի շուրջս, մտածում էի, որ արդէն գտել եմ իմ ապագայ հարստութեան աղբերը: Եւ ինչպէս մշտական ձիւնի սահմաններում գտնուած ծաղիկը

նորից բուսնում է, այնպէս էլ յոյսը նոյն ըռապէին իմ հոգու մէջ մտաւ:

Այնքան էլ հետաքրքիր չէր լինիլ իմ այս ափի վրայ անցկացրած տարիների միատեսակ շրջանը մանրամասն պատմելը: Միայն կարող եմ ասել ափի երկարութեամբ ընկած տեղական գիւղերի և պարզասիրտ բնակիչների մասին, որոնք մատակարարեցին ինձ իմ կեանքի անհրաժեշտութիւնները: Ես կարող եմ ասել այն նոր երկրի մասին, որ բնութիւնը ներկայացնում է այս արևադարձալին աշխարհում: Կարող եմ ձեզ զծագրել այն ժամանակի փոփոխութիւնները, թէ ինչպէս նոքա անցան և ինչպէս ազդեցին իմ զգացմունքների վերայ: Բայց այդ բոլորը բաց եմ թողնում:

Այստեղ ըլկայ զբաղմունք, որ որոշ հանդամանքների տակ կիրք չըդառնալ: Նոյն իսկ տնհաւատալի կըթուայ, որ օրերն, ամիսները, մինչև անդամ տարիները պէտք է անցկացնէի միայնակ, ծովի ափին թափառելիս, ալիքների ափը ձգած արտադրութիւնները որոնելով: Բայց ես կարող եմ ասել իրաւամբ, որ առանց վարձատրութեան լոյսի, իմ բարձր կրքի թոլլուութիւնից, այսպէս զբաղուելով, ես կարող էի իմ օրերն անցկացնել գոհ, մինչև անգամ երջանիկ կերպով: Ես սպասում էի օրուայ բացուելուն, որ լոյսն ինձ կարողութիւն տար իմ զբաղմունքը նարոգելու: Ես երկարա-

յնում էի օրը, մինչև իմ որոնած առարկաների աննկատելի դաւանալը, մինչև այն ժամանակը, որ փոխանակ նուազեցնելու, աճեցնում էր իմ եռանդը: Ես ոգևորութեամբ հսկում էի իմ հատաքած գանձերի վերայ ոչ պակաս ուրախութեամբ, քան իմ ալժմեան ոսկիների վրայ էմ նայում, որ ստացայ նոցա փոխարէն: Եւ մինչև անգամ ալժմ, երբ իմ աշխատանքով ես արժանացայ իմ անկախութեանը, չըթողնեմ իմ բնիկ տունը և նորից թափառական դառնամ ովկիանոսի վրայ, դէպի նրա խորքում ցրուած կղզիները:

Բայց վերջապէս տարիներն անտեղեակ անցան, և ընտանի խաղաղութիւնը հաշտեցրեց ինձ այն հանգստութեան հետ, որ թուլացնում է բնութեան պահանջները. թէպէտ և նա չի կարող վերացնել ինձնից իմ ցանկութիւնները: Նոյն իսկ հիմա էլ, եթէ իմ անդամները հնազանգուելին իմ մտքի դրդումներին, և ուժը կարողանար կենդանացնել իմ մէջ այն եղանակը, երբ իմ անդամները հնազանդում էին յաճախ իմ մտքի դրդմանը, ես նորից խեցիներ ժողովող Գոդոլֆ կըդառնալի: Յաճախ երազում իմ երևակայութիւնը կազմում է տեսարաններ, արտադրում է նոր պատկերներ անցեալից: Յաճախ ես նստում եմ զառիվայր ժայռի վրայ և դիտում ալեծուփ ովկիանական ալիքը մօտենալիս, կամ փոքրիկ կոհակը իմ ներքեկից

շարժուելիս: Յաճախ ես սպասում եմ օրսւայ բացուելուն, ծովափին, չոր աւազալին բլրակի վերայ, կամ իմ օրեկան աշխատանքի սպուղը հաւաքելիս ծովի մօտ կազմուած մի փոսի մէջ, մինչև տնամպ արեգակը խորասուզում է ջրերի մէջ:

Ես շատ կլիմանելում եղած մարդ եմ. իմ օրելը  
համբած են:

առջնական և լուսավետ եղան ու խոցմառափակ և նաև բժիշու և դպրության վեհակ և նմանքանից՝ զամանակ պարզ պարզ գումարակին նամառար մասնաւույն

Petrug

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ  
ՊՈЛИՏԵԿՆԻԿԱԿԱՆ ԲՈՒԺԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

7/51..1922



ԱԿՈՆԻԱ, ԽՃԵԿԱՅԻԱ ԱՎԱՐԱ  
ԱՅՍՍԱԿՑԱՍԻ ԱՎԱՐԱ

494

R. 60113

